Արձանագրություն N 2

<<ՀՀԲՊԿ-ԳՀԾՁԲ-18/7>> ծածկագրով <<Հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթներ>>-ի ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26.03.2018թ
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Բաղինյան
Հանձնաժողովի անդամներ ՝ Տ. Ղուկասյան
Շ. Իսախանյան
Ս. Զաքոյան
Գ. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. Տեղեկություններ <<ՀՀԲՊԿ-ԳՀԾՁԲ-18/7>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Հ. Բաղինյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի մարտի 22-ին, ժամը 11:30-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 850 000 (ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Էլ. հասցե*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<Սոֆթլայն Ինթերնեյշնլ>> ՍՊԸ	karine.yeghoyan@softlinegroup.com info.am@softlinegroup.com	523 900	104 780	628 680

դ) Ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել 2018 թվականի մարտի 23-ին ժամը 11:30-ին:

ե) Գնման ընթացակարգի մասնակցի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- <<Սոֆթլայն Ինթերնեյշնլ>> ՍՊԸ-ի տնօրենը Սարգիս Հարությունյանն է, սակայն փատաթղթերը ստորագրվել են Մարիամ Չոբանյանի էլեկտրոնային ստորագրությամբ: Բացակայել է տնօրենի կողմից ստորագրության իրավունքը վերապահելու մասին համապատասխան լիազորագիրը:

- Հայտով ներկայացված հավելված 2.1-ում նշված չի եղել անձը հաստատող փաստաթղթի տեսակը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ հանձնաժողովը որոշել է ծանուցել վերը նշված կազմակերպությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որն էլ արվել է վերջինիս կողմից:

Հանձնաժողովը որոշել էր հաջորդ նիստը հրավիրել 2018 թվականի մարտի 27-ին ժամը 11:00-ին, սակայն քանի որ մասնակցի կողմից անհամապատասխանությունները շտկվել են 2018 թվականի մարտի 23-ի ժամը 15:23-ի դրությամբ, հանձնաժողովը որոշել է հաջորդ նիստը հրավիրել սահմանված ժամկետից շուտ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/7>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Հ. Բաղինյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով ընթացակարգին ներկայացված հայտը գնահատվել է հետևյալ կերպ.

Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<Սոֆթլայն Ինթերնեյշնլ>> ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Հ. Բաղինյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<Սոֆթլայն Ինթերնեյշնլ>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. <<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/7>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ. Բաղինյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման պատասխանը ստանալու օրը, բայց ոչ ուշ, քան 2018 թվականի մարտի 30-ին ժամը 12:30-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝	----------	Հ. Բաղինյան
Անդամ՝	----------	Տ. Ղուկասյան
	----------	Շ. Իսախանյան
	----------	Ս. Զաքոյան
	----------	Գ. Խաչատրյան
Արձանագրությունը կազմեց Հանձնաժողովի քարտուղար՝	----------	Տ. Վասիլյան